ՀԱՅԱՑ

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 5 կիրակի 2 փետրուարի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր փոտո-գլաւիւր պատկերը, 2) *Մայրիկի անձրեւում*, մի շքեղ խրոմօ, 3) *Ոսկէ հղիաներում, կամ Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդեր, բնագատրուքիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 р. (տարասահման 4 р. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 р. (տարասահման 10 р. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. *Գրամիաները ստանում է* Աղբիւր-Տարազ *միևնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։*

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Իպացիոյի այրին իրաւունք ստացաւ Թէոդորա կայսրուհուց հանել ջրից իր ամուսնու դիակը եւ հողին յանձնել.

ԹԷՈԴՈՐԱ *)

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինոյի

(*Շարունակութիւն*)

XX

Հետևեալ օրերին, այսինքն յունուարի 16-ին և 17-ին, ապստամբները արդէն քաղաքի կատարեալ տէրն էին դարձել։ Կայսրի այն կողմնակիցներին, որոնք ուզում էին կարգ ու կանոն պահպանել, ծովն էին ձգում։ Հրդեհի բոցը քամու օգնութեամբ սարսափելի աւերումներ էր անում։ Այրւում էին պալատներ, պաշտօնական հիմնարկութիւններ, մասնաւոր տներ, սուրբ Իրէնայի, սուրբ Թէոդորոսի և սուրբ Սոփիայի եկեղեցիները, այնուհետև բաղանիքներ, սրահակներ և հիւանդանոցները, որտեղից լսւում էին տկարութեան պատճառով մահճակալին մեխւած հիւանդների սիրտ կտրտող աղաղակները։

Քաղաքացիների մեծ մասը Բոսփորից անցաւ ասիական ափը փրկութիւն որոնելու։

Յուստինեան կայսրը, իր գործակալների միջոցով, ձայն տարածեց, որ ինքը պատրաստ է կատարելու ժողովրդի կամքը։ Այդ պատճառով կրկէսի մեծ իպոդրոմի վրայ հաւաքւել էին գլխաւոր ապստամբ-

*) Տես Տարազ № 4.

ները խորհրդակցելու։ Այդ ժամանակ բոլորովին անսպասելի կերպով բաց եղաւ արոյրաշէն դուռը և Յուստինիան կայսրը երևեցաւ աւետարանը ձեռքին։

Մի րոպէում լռութիւն տիրեց։

—Երդւում եմ այս սուրբ աւետարանով,—սկսեց Հանդիսաւոր կերպով կայսրը,—ներել ձեզ այն վիրաւորանքների համար, որ դուք լինած տուիք։ Ոչ մէկին ձեզանից չեն ձերբակալի և հալածի, եթէ դուք կըլսէք և կվերադառնաք ձեր խաղաղ պարապմունքներին։

Խռով խօսակցութիւն լսեց ամբոխի մէջ։ Կայսրը շարունակեց.

—Պիմիայն ես եմ մեղաւոր և ուրիշ ոչոք։ Իմ մեղքի համար Աստած ինձ պատժեց։ Ի՞նչու ես չըզգացի ձեր կարիքները։

Ամբոխի միջից աղաղակներ լսեցան.

—Կեցցէ՛ Յուստինիանը և նրա օգոստափառ ամուսին Թէոդորան։

Բայց յանկարծ մի քանիսը աղաղակեցին.

—Դու լրբաբար սուտ ես խօսում։

—Մահ նրան։

—Մահ աւազակին։

Յուստինիանը շտապեց մտնելու պալատի սենեակները։

Նրա գնալուց անմիջապէս յետոյ ժողովը վճռեց ուրիշ կայսր ընտրել։ Շատ անուններ տուեցին, նրանց թւումն էին նաև Հանդուցեալ Անաստասիոսի եղբօրորդի քը՝ Իպացիոսը և Կլէոնը։ Յետոյ առաջարկեցին ընտրել քաղաքաբնակ Իպացիոսին և բոլորը դիմեցին նրա տունը։ «Կեցցէ՛ Իպացիո կայսրը» աղաղակները թընդում էին օդում։ Վերջապէս ձայնը հասաւ Իպացիոսի ականջին, նա մօտեցաւ պատուհանին, հասկացաւ թէ բանն ինչումն է և դուրալի ժպտաց։ Նրա երիտասարդ դեղեցկուհի կինը նկատեց ամուսնու դէմքի գոհունակ արտայայտութիւնը և դգւելով նրան, աղաղակեց.

—Թանկագին Իպացիո, մի դրաւելիր վտանգութեամբ, ի սէր Աստուծոյ, մի համաձայնի ընտրելու։ Մտածիր թէ ինչ է պակաս մեզ։ Մենք երկուսս էլ երիտասարդ ենք և շատ բախտաւոր. մենք երկու հրեշտականման երեխայ ունենք։ Մի՛թէ մենք կատարեալ բախտաւոր չենք։ Մի՛թէ բարձր տիտղոսը կարող է աւելացնել մեր երջանկութիւնը։

Այն ինչ ժողովրդից ընտրուած պատգամաւորները մտան դահլիճ։ Նրանք յայտնեցին Իպացիոսին, որ ժողովուրդը նրան միաձայն ընտրել է կայսր և պէտք է անյապաղ գնայ թագադրելու։ Իպացիոն ընդդիմանում էր, թէպէտ և թոյլ։ Նրա կինը շալուկակ աղաչում էր, որ չըհամաձայնի։

—Ժողովրդի համակրութեան և հակակրութեան զգացմունքները, ասում էր Իպացիոսի կինը, չափից դուրս շուտ են անցնում, ուստի չի կարելի յոյս դնել նրանց վրայ։ Քո ժամանակաւոր փառքը, հաւատա՛ ինձ, կորստեանդ պատճառ կըլինի։

Յետոյ նա բերեց իր երկու երեխային, նստացրեց ծնկներին ամուսնու առաջ և ասաց.

—Խնդրեցէ՛ք ձեր հօրը, աղաչեցէ՛ք նրան, որ մեզ չըթողնի, նա գնում է կատարեալ մահանալու։

Պանուկները լաց էին լինում, փաթաթւելով հօր ծնկներին։ Իպացիոն տատանւում էր։

—Ականջ՛ մի դնի, ով քաղաքացի և մի վախենայ։ Յուստինիանը գահընկէց է արւած և ամբողջ ժողովուրդը միաձայն կայսր ճանաչեց քեզ։ Դու չըպէտք է մերժես այն թագը, որ ժողովուրդը առաջարկում է քեզ։

Ի զուր կինը և երեխաները խնդրում էին Իպացիոսին. նա դուրս եկաւ փողոց, ամբոխը բարձրացրեց նրան ձեռներին և մանածեց քաղաքի մէջ։ Ամբոխը կանգ առաւ Կոստանդինի հրապարակի վրայ.

—Այժմ,—յայտնում է ժողովրդի առաջնորդը—մտնի՛ր կայսերական պալատը։

Ամբոխը ուզում էր դիմել դէպի պալատ, բայց քաղաքացիներից մէկը բարձրացաւ արձանի պատուանդանի վրայ և նշան տուեց ձեռքով, որ ուզում է խօսել։

Ամենքը կանգ առան։ Փողոցային հռետորը բարձրաձայն ասաց.

—Պալատը զինուորներն են պահպանում, իսկ մենք զէնք չունենք, ուստի նախ քան պալատին մօտենալը, պէտք է հոգալ զէնքի մասին։ Գնանք դէպի զօրանոցը։ Բայց կարծես, շարունակեց հռետորը, Յուստինիանը չի սպասում պաշարման։

Բարձրանում է ընդհանուր ծափահարութիւն և ամենքն էլ վճռում են, որ անհրաժեշտ է ընդունել հռետորի խելօք խորհուրդը։ Բայց առաջարկում են նախ և առաջ գնալ խղպղրոմ։ Ժողովուրդը դիմում է դէպի կրկէս։ Այնտեղ պէտք է նըստացնէին Իպացիոսին կայսերական ամբիոնի վրայ, ուղեկցութեամբ ամբոխի աղաղակների։ Նրանից յետոյ բոլորը դիմում են զօրանոցին, զինուրւում և վազում են դէպի կայսերական պալատը։

Յուստինիանը վախեցած փակւել էր պալատի սենեակներում։ Նա արաւ արդէն այն բոլորը, ինչ կարողացաւ։ Ուղարկեց մէջնորդելու ժողովրդին, խոստացաւ նրան ընդհանուր ներումն շնորհել, մինչև անգամ ողորմածութիւն, փորձեց հակառակել, բայց ոչինչ չօգնեց։ Ամբոխը քանի գնում աւելի ևս բազմանում

էր, շրջապատելով պալատը ամեն կողմից: Ապստամբները սպառնում էին մահով ամբողջ կայսերական տոհմին և պալատականներին: Այդ սպառնալիքը լսում էր նաև Յուստինիանը, որին բաժանում էր ապըստամբներից միմիայն կատիզմի արտյրաշէն դուռը: Ի՞նչ պէտք է անէր: Հակառակվել այդ անթիւ ժողովրդին հազարաւոր զինուորներով, ակներև էր, որ չէր կարելի: Յուստինիանը խորհրդի հրաւիրեց բոլոր պալատական աւագորիարներին և իր ամուսին Թէոդորային, խնդրեց, որ ներկայ եղողները յայտնեն իրանց կարծիքը, բայց նրանցից ոչ մէկը չէր համարձակվում խօսել: Գահլիճում մեռելային լռութիւն էր տիրել: Այն ժամանակ կայսրն ասաց.

—Ձեր լռութիւնը չափազանց զեղեցիկ է, ես նկատում եմ, որ ինձ ոչինչ չէ մնում, բացի փախուստը:

Յուստինիանը վաղուց արդէն նախատեսել էր այդ դառը անհրաժեշտութիւնը և արդէն երեք օր էր, որ պալատի բոլոր գանձերը տեղափոխել էին Բոսփորի վրայ կանգնած շոգենաւը:

—Ուրեմն, շարունակեց կայսրը—ես գնում եմ շոգենաւ իմ օգոստափառ ամուսնու հետ, իսկ դու, Բելիզարիոս, աշխատիր որքան կարելի է պահել ամբոխի ընդհարումը, մինչև որ մենք ափից հեռանանք:

Բայց ահա Թէոդորան վեր է կենում տեղից և ընդհատում է լռութիւնը.

—Թէպէտ մեր մեծ ճանապարհը փախուստն է, բայց ես դրա հետ համաձայն չեմ,—ասում է նա: Մեծ ամեն մէկին ծննդեան օրից չէ վիճակւած մեռնելը: Ի՞նչու է պէտք վախը, սմօքալի փախուստը: Ես իմ կողմից չեմ կամենում ստորացնել իմ կայսերական կոչումը այդպիսի խայտառակ վարմունքով և մնում եմ այստեղ: Ինչ վերաբերում է քեզ, ալքայ, դու ազատ ես, ինչ ուզում ես արա: Շոգենաւը բեռնաւորւած է աւարներով, ծովը բաց է—փախիր, բայց ես քեզ չեմ հետևի, իմ կոմքը հաստատ է, ես մնում եմ: Մահու սարսափը ինձ չի ստիպի պատճանելու իմ սրբազան պարտականութեանը: Ես միշտ մտաբերել եմ հին առածը, որ «արքայական ծիրանին թաղման փառաւոր ծածկոց է»:

Թէոդորայի այս համարձակ ճառը խոր տպաւորութիւն թողեց ամենքի վրայ: Յուստինիանը ամօթից կարմրեց և տիրելով զլուխը իջեցրեց: Քննեղալ Բելիզարիոսը արագ բարձրացաւ տեղից, մերկացրեց սուրը և ասաց.

—Երդւում եմ պաշտպանել մինչև արեանս վերջին կաթիլը մեծ կայսրուհի Թէոդորային:

Սպաները միաձայն պատասխանեցին նոյնը և մերկացնելով սուրը դուրս վազեցին դահլիճից:

Շուտով այդ հաւատարիմ քաջերը, թւով երեք հազար հոգի, ժեներալ Բելիզարիոսի հրամանատարութեան ներքոյ, դուրս եկան պալատից և դիմեցին դէպի կրկէս:

Հէնց այդ րոպէին ժեներալ Բելիզարիոսի դլխում մի հանճարեղ միտք ծագեց: Նա հրամայեց փակել կրկէսի բոլոր դռները: Այդպիսով բոլոր ապստամբները թռչունների նման թակարդի մէջ ընկան: Հետևեալ առաւօտ երեսուն հազար դիակ դուրս բերեցին կրկէսի դլխաւոր դռներից և այդ օրւանից այդ դռները կոչեցան մահւան դռներ—porta dei morti.

Հրապարակի վրայ թագադրւած Իպացիոն և նրա եղբայրը մի տեսակ հրաշքով կարողացան փախչել կրկէսից: Նրանք երկուսն էլ եկան կայսեր և կայսրուհու մօտ:

—Մեծ հրամանատարնեը,—աղաչում էին դրժբախտները,—ներեցէք մեզ. մենք էինք, որ նեղս տարանք կրկէսը ապստամբներին և դրանով նպաստեցինք նրանց վերջնական ոչնչացնելուն:

—Շատ դեղեցիկ,—պատասխանեց նրանց կայսրը, եթէ դուք այդպիսի ազդեցութիւն ունէիք ապստամբների վրայ, ինչու վաղ չբնանդարեցիք նրանց, որ քաղաքային շինութիւնները չայրեն:

Այս ասելով Յուստինիանը հրամայեց կախել երկու եղբայրներին էլ:

Նոյն դիշերն իսկ Իպացիոյին և նրա եղբայր Պոլտէոյին խեղդամահ արին բանտում և դրանց դիակները ձգեցան Բոսփոր: Իպացիոյի անմխիթար այրին իրաւունք ստացաւ Թէոդորա ողորմած կայսրուհուց հանել ջրից իր ամուսնու դիակը և հոգին յանձնել:

Յեղափոխութեան միջոցով կատարած աւերումները սարսափելի և անուղղելի էին: Պլուտոները, թանդարանները, հնազոյն աշխարհահռչակ նկարիչների քանդագործական արտադրութիւնները, պալիւոսներ, յիշատակարանները, եկեղեցիները, շինութիւնները, պալատներ և այլն, և այլն բարբարոսաբար ոչնչացրին, մասամբ կողոպտեցին, մասամբ այրեցին: Թէոդորայի առաջնորդութեամբ, որ իր եւանգելով փրկել էր թագի պատիւը, սկսեցին նորոգել ամեն ինչ, ինչ որ միայն կարելի էր նորոգել: Նախ և առաջ սկսեցին ուղղել Ս. Սոփիայի եկեղեցու շինութիւնը, յետոյ մնացեալ հասարակական շինութիւնները: Այնքան ժողովրդին ատելի՝ Զիսվաննի դի-Կապադոչէիա և Տրիբոնիանոս նախարարները, որ օգտւում էին նոյն իսկ Թէոդորայի ողորմածութիւնից, մնացին իրանց տեղերում: Մեղա-

ղ ո ւ հ ա.

ւորներին և ապստամբութեան մէջ կասկածաւորներին անխնայ պատժում ու կախում էին։ Կրկէսը փակւեց մի քանի տարով և դումարումները, ուր որ լինէին, խստիւ արգելւեց։ Վարպետները իրաւունք չունէին զէնք շինելու։ Կայսերական պալատը շատ ամրացրին։ Մինչև անգամ խաղերը և ներկայացումները արգելւեցան։ Միով բանիւ Բիւզանդիոնի մայրաքաղաքում այդ ապաբաղդ ժամանակ ահ ու սարսափ ձգեց Թէոդորայի յարգողների մէջ։ Նրանք անում էին՝ ինչ կամենում էին և նրանց անիրաւութիւնները ոչ միայն անպատիժ էին մնում, այլ մինչև անգամ ուռանց մի որ և է բողոքի հալոտահարւած ժողովրդի կողմից։

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

(Կըշարունակի)

RONDEAU

—

Օ, տեսի՛լ չենաղ, որ անգրաւելի,
Թեթեւ սահում ես կապոյտ եթերով,
Ասես թովչանքով մէկ անմեկնելի
Լցնում ես շուրջդ՝ մոլար խալուածքով, —
Նորի՛ց երեւցար դու մի ճիճ վէրով։

Տըխուր՝ իբր աշնան արցունքը վերջին
Եւ երազաշաս, ինչպէս մըտազբաղ
Գարունն՝ անվստահ ժպտովն առաջին —
Օ, տեսի՛լ չքնաղ։

Կա՛խ մընա օդում, եւ աչքիս շուարած
Երեւցիր երազ ամրան սիրազբաղ,
Որ այդ երազի՝ մարգարտով շարած
Փողի տակ տեսնեմ ես մի կեանք՝ մեռա՛ծ
Եւ մի մահ՝ կենդա՛նի, ինչպէս դու, աւաղ,
Օ, տեսի՛լ չքնաղ։

Ա. Լ.

ՀԱՅԵԱՑՔ

ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍ *)

I

Անցաւ ժամանակն արագասլաց գնդակի պէս, որը խոցում է պատահող թուլամարմին արարածին շանթոտ կրակով, որի անզգայութիւնը խնայել չգիտէ թշւառի սիրտը, որի առաջ նոյնն են իշխան ու մուրացիկ. նա բոլորին է տապալում։ Անցաւ ժամանակը, բայց հայեացքը չընսեմացաւ դժբախտ կուսի մտքի ծալքերում։ Մորմոքող մտապատկերը ոչ միայն նսեմանում, ոչնչանում է, այլ դառնում է երևակայութեան նիւթ, որն ընդարձակում է նրան՝ նոր-նոր օգնական մտապատկերներ աւելացնելով։ Այն միակ հայեացքի տեղ կուսի հոգում գոյացաւ մի նոր աշխարհ, որի երբեմնակի վերարտադրութիւնից բարձր վայելչանք դեռ չէր երևակայում։ Նա երջանիկ էր համարում իրան... Բայց երջանկութիւնը միայնակ չէ ճանապարհորդում, նա ունի նաև ուրիշ ընկերներ, որոնք երբեմն չետնորդի դեր են կատարում, երբեմն առաջնորդի և երբեմն ընկերակցի։ Լարայի (հերոսուհու անունն է), բնութեան այդ ծաղկի մօտ երբեմն երկրորդ և երբեմն վերջին պաշտօնն էին կատարում։ Ովքե՞ր են երջանկութեան ընկերակիցները. — Տանջանքն ու Յոյսը...

Տանջանք... Նա մի թռչուն է, որ հոգին անդադար կտցահարելով՝ արիւն-արցունք է հոսեցնում նրա մէջ. նա վախճան չունի մինչև այն րոպէն, երբ երջանկութիւնից կտած մի նետ դուրս կըթռչէ ուրիշ հոգուց և կըփռէ նրան դիտապաստ։ Նա մի կախարդ է, որ մարդկային սիրտըն ահաբեկելով բանտարկում է դիւթական շղթաների մէջ, և երբէք չի արձակիլ, մինչև որ մի ուրիշ կախարդ դրաւելով նրան երկնահիւս մեղեդիներով՝ կըհամոզէ նրան քաշւելու անգութ զւարճութիւնից։ Նա մի հրանիւթ գործիք է մեռած ամպրոպ ու կայծակում, որ և կոկում, շըտկում, ապնւացնում է հոգին, և կեղեքում մարմինը՝ տանջելով անվերջ, մաշելով, մաշելով նրան։

Իսկ Յոյսը... Նա չքնաղ կնոջ կերպարանք առած իլլիւզիա է, որ կանգնած է թւում սեպաձև ժայռի հեռաւոր անկիւնում և որն անճարին դէպ իրան է քաշում երջանկութեան անունով. նրա խաբէութիւնը միայն այն ժամանակ է երևան գալիս, երբ մահկանացուն բարձրացած է լինում արդէն ժայռը։ Օ՜, այդ ժամանակ փրկութիւնն այլ ևս անյուսալի է, մարդը պիտի ջախջախւի թաւալգլոր լինելով անհուն բարձրութիւնից անյատակ վիհ մէջ, որում տիրում է յաւիտենական խաւարը։ Յոյսը սիրում է միայն նրա համար, որ նա զեղանի է երևում հեռւից և երբեմն էլ անապատի տեղակ շնորհում է զալարագեղ հովիտ այն մարդուն, որը միայն իրան չէ ապաստանում, այլ և ուրիշներին։ Յոյսն ու տանջանքը արժանաւոր մրցակիցներ են, հոգու խորքերում ստէպ պատահող փոթորիկները նրանց վիճաբանութիւններն են։ Տանջանքի չաղթութիւնն աւելի խիստ հետևանքներ է ունենում. նա կենդանի արարածի թունաւոր գերեզմանն է...

Օ՜ Լարա, զգոյշ...

---

*) Առաջին մասը տպագրւած է 1896 թ. „Տարազ“-ի № 45-ում։

II

Եթէ երբեմն կուսի հոգում զարթնում էր տանջանքը և որպէս օձի լեզի անկում էր սպառնում նրան, յոյսը ոչնչացնում էր թոյնի ոյժը։ Նա դեռ չէր կորցրել իր մէջ ծնունդ առած այն համոզմունքը, թէ հպարտ օտարականը վերադառնալու է մի օր, և սպասում էր անհամբերութեամբ։ Առաջին օրը, երբ գնաց նա, Լարան աւելի մեռածի էր նմանում, ամբողջ օրն անկողնից դուրս չ'եկաւ, միայն բարձն էր արցունքով թանում։ Յաջորդ օրը բոլորովին նման չէր նախորդին. յոյսն այդ օրը գոյացաւ նրա հոգու մէջ։ Այդ բոլորը չէ. նրանում լայն ծաւալ ստացաւ դեղեցկութեան գաղափարը։ Երբ հեռացաւ օտար այցելուն, նա սկսեց սիրել այն օձկանդրը, որի ստերում նստում էր նրա սիրած երիտասարդը. սկսեց սիրել այն ծաղիկը, որ սիրելու կրծքին էր լինում ամրացրած. սկսեց սիրել այն հողը, որ հոգու մէջ այնպէս ախորժ, դուրեկան յիշատակներ էր զարթեցնում։ Այնուհետև նա սկսեց զարդարել այն ամեն դեղեցկութիւններով, որոնցով կարող էր միայն օրօրուող կուրծքը զովացնել առաւօտեան զեփիւռով, որը փչել էր մի ժամանակ սիրելու դէմքին, և շատրւանի ցոլքերով ցօղում էր հոլանի կոները, որոնց շիթերով երբեմն զովացել էր սիրելու դէմքը։ Երջանիկ և դժբախտ ժամեր...

Որքան էլ երկար թւաց ժամանակը մի սպասողական դրութեան մէջ ընկածի համար, այնուամենայնիւ նա անցնում է և վրայ է հասնում որոշուած ժամը։ Լարան կանգնած էր աւազանի ափին մի նարնջի ոստիկ խրած կրծքի առաջով անցնող հանգոյցի մէջ։ Որքան մօտիկ էր տարածութիւնն այդ ճիւղից մինչև սիրտը թէ նիւթապէս, թէ հոգեպէս, ինչքա՜ր չէր յիշեցնում այդ ըստ երևութին անշունչ ոստիկը...

Բայց ահա լսում է կառքի դղրդոց, ո՞վ կարող է լինել ճանապարհորդը, այդ կողմերով շատ էլ չեն անց կենում։ Օ՜, չըլինի՞ թէ նա է; այն անմատչելի, անհասանելի, այն «էակ» անուան տակ թագնուած ոգին, այն հպարտը... օհ, սիրելու այս վերջին յատկութիւնը վհատութիւն էր պատճառում Լարային։

—Այդ ոչինչ, բայց ո՞վ է այն... Տէր Աստուած, նա է, նա, ինչ անեմ, ահա մօտենում է... ահա, ահա... արդեօք գնամ ոտքերն ընկնեմ, թէ՞ համբուրեմ այն չնաշխարհիկ աչերը... օ, եթէ թողնէր միայն... Բայց ես կըլսելագարւեմ, Աստուած իմ, վազեմ դղեակը...

Եւ նա սրընթաց քայլերով փախաւ դէպի վեր անդադար յետ նայելով, կանգնեց պատշգամբում, բայց այնտեղ էլ չըկարողացաւ հանգիստ մնալ։

—Ո՜ւհ, գնամ մօրս յայտնեմ, նա որքա՜ն կուրախանայ (հայրն արդէն դուրս էր եկել և գրկել նորեկին)... Այո՛, մօրս... Բայց չէ՜... մայրիկն ինչո՞ւ չէ սիրում Էօնարդոյին... Էհ, այդ վատ է... Ա՜հ, այդ աչքերդ... ես կաշխատեմ, որ մայրս էլ քեզ սիրէ, ազնի՛ւ տղայ, իմ Էօնարդօ... Եւ սանդուղքներից վայր թռաւ նետելու երիտասարդի գիրկը, փարելու նրա պարանոցով, բայց զսպեց իրան և խաղաղ, հանգիստ, յանցաւորի նման գլխակոր կրկին վեր բարձրացաւ։ Բարձրացան նոյնպէս հայրն ու Էօնարդօ և մտան հիւրասենեակը։ Լարան մտածեց մի քանի րոպէ, թէ ինքն էլ մտնի, թէ՞ ոչ. սիրտը թնդում էր, աչքերն այրւում էին, կորցրել էր իրան. վերջապէս արադութեամբ ներս ընկաւ՝ չըկարողանալով հաշիւ տալ իրան արածի մասին, բայց մէկ էլ շեմքից յետ փախաւ։ Հայրը նկատեց այդ։

—Լա՛րա, կանչեց նա թոյլ, բարո՛ւկ ձայնով,—Լա՛րա, չե՞ս լսում... Ներս արի։

Աղջիկը ներս մտաւ և մնաց շւարած կանգնած սենեակի մէջ տեղում։ Ափոթութիւնը նոր շփոթութիւն էր առաջ բերել։

—Աղջի՛կս, բարևիր Էօնարդոյին,—ասաց հայրը նրան անյարմար դրութիւնից հանելու համար։ Լարան մօտ գնաց, դողդողալով բազուկը մեկնեց դէպի օտարականը ու շտապ բարևելով դուրս վազեց ցնցման մէջ։ Բայց չընկատեց, ոյժ չունեցաւ նկատելու, թէ երիտասարդը նայեց իր վրայ, թէ՞ ոչ։ Այդ ծանր հարցին նա վերջապէս իր մէջ պատասխանեց՝ այո՛. սակայն ով ներկայ եղած լինէր բարեւի րոպէին, անշուշտ պիտի ժպտար այդ միամիտ պատասխանի վրայ։

—Էօնարդօ, քոյրդ քեզ սիրում է, դու ուրախ չե՞ս, —հարցրեց հայրը վրդովուած երիտասարդին Լարայի դուրս գնալուց յետոյ։

—Մեծ պատիւ չէ ինձ, որ դա քոյրս է համարւում։

—Ի՞նչ անգութ ես. երևակայի՛ր, թէ նա հօրդ զաւակը չէ, մինչև անգամ, մի օտար, Լոմբարդիայի հովտից մեր աշխարհն ընկած որ և է կին է, բայց քեզ սիրում է, մի՛թէ պիտի դէն հրես...

—Այդ ուրիշ բան է, այն ժամանակ գուցէ մինչև իսկ կրսիրէի։ Բայց այժմ, այժմ կարո՞ղ է կրծքիս տակ գթութեան գէթ մի կայծ վառւել այն արարածի համար, որը միայն արատ, անպատուութիւն է բերում ինձ։ Որը մի մշտնջենաւոր պալար է առողջ մարմնիս վրայ, մի նախատինք է անմեղ երեսիս, անարդար բնութեան մի չանցաւոր ապտակ է՝ հասցրած դէմքիս։

—Դրանով ի՞նձ ես վշտացնում, զաւակս։

—Հայր, դու ինձ շա՛տ վաղուց ես վիրաւորել, վաղուց արատաւորել մաքուր, անբիծ անունս. ների՛ր, որ որդին խիստ է խօսում հօր դէմ, որ նրա խօսքերի մէջ եռում է յանդիմանութեան հուրը, բայց ի՞նչ արած, չեմ կարող թագցնել տրտունջս, անկարելի է զսպել մի այնպիսի կատաղութիւն, որը սրտիս խորքում փակելով՝ պիտի նրանից ամենայն վայրկեան հարւածւեմ։ Օ՜ հայր, ների՛ր ինձ, որ վիրաւորում եմ քեզ. դու ինձ վիրաւորեցիր այն րոպէին, երբ թողնելով դեռատի, նորահարս մօրս, փախար այստեղ.—այո՛, ճիշտ է այն, որ գրաււել էիր մի ուրիշով, բայց միթէ մայրս մեղաւոր էր, որ քեզ սիրում էր. ուրիշ բան է, եթէ ամուսնութեան կապը եղած չըլինէր ձեր մէջ, բայց դու թողեցիր ինձ օրօրոցում լալիս և արհամարհելով իմ գոյութիւնը՝ հեռացար քո տնից։ Եթէ չըլինէր այդ դէպքը, հաւանօրէն մայր կունենայի, իսկ այժմ զրկւած եմ այդ ամենամեծ բարիքից։ Նա մեռաւ չարաչար տանջանքների մէջ, բայց մահւան րոպէին էլ քեզանով էր զբաղեցրած միտքը։

—Էօնարդօ, հաշտւիր հօրդ հետ, թող այսքան երկար ու ձիգ տարիները խլած լինեն աստւածանդ

վերջին նշոյլը, հաւատա, որ նա քեզ սիրում է, նա ղղջացել է, քարասիրտ չէ նա, ներիր նրան...

Եւ ես ներեցի՝ քեզ համար ժողոված բարկութիւնս աւելացնելով այդ աղջկայ և իր մօր համար կիտած կատաղութեան վրայ։ Օ՜, եթէ երկնքից մի շանթ դուրս թռչէր և վերջ տար դրանց շնչին, ինձնից հանդիստ մարդ չէր գտնելի երկրագնդիս վրան։

—Դու չափից անցար, ամօթ է այդ...

—Ամօթալի լօսքը աչքից արցունք չէ խլում, իսկ դու լալիս ես... Եօթ տարի է, ինչ որ հանգաւ մօրս կեանքը. այսքան ժամանակամիջոցում երկինքն անգամ մոռանում է իր զոհերին, իսկ որդին ուրիշ կերպ է ստեղծւած, եթէ ես մեռնէի, չքանայի աշխարհից և մայրս կենդանի մնար, մի՞թէ նա կը մոռանար ինձ... Եթէ ոչ, ես ինչու՞ մոռանամ։ Իսկ ամուսնու համար մոռանալուց հեշտ ինչ կայ. նա օտար է, խորթ է, միանգամայն հեռու անձնաւորութիւն է կնոջ համար, այսօր կայ վերջինս, վաղը ոչ, բայց նրա տեղ ուրիշը կայ։

—Մի՞թէ կանանց համար այդպէս չէ։

—Գոնէ մօրս համա՞ր ոչ...

—Բայց մի՞թէ ես մոռացել եմ նրան...

—Դու մոռացար նրան այն րոպէին, երբ թողեցիր և փախար։

—Օ՜, մի չիշեցնիր, անխիղճ, դու եկել ես տանջանքովս հրճւելո՞ւ... Ի՞նչ ես պահանջում լինելից, թողնել կնո՞ջս, բայց չէ՞ որ միւս օրը նրա գաւակը կարող է նոյնը կրկնել, ինչ որ դու ես ասում. առանց այն էլ դժբախտ եմ ես...

—Մի բորբոքիր ինձ, հայր, այնքան խիստ է կատաղութիւնս, որ եթէ քիչ էլ աւելանայ, պիտի վերջ տամ քո գաւակի կեանքին. եթէ նրա բարին ես ցանկանում, լսի՛ր։

—Այդ ինչ չանդգնութիւն է, մի՞թէ Աֆրիկայի խորքերից ես փախած. ո՞ւմից ես ժառանգել այդ ահռելի խստութիւնը...

—Քեզնից...

Եւ հայր ու որդի գլուխները կախեցին լուռ ու մունջ։

III

—Ոչ, անկարելի է այսպէս ապրել, մինչև անգամ քունս խռովւում է այդ աղջկայ ներկայութեամբ. ամեն անգամ երազումս նրան եմ տեսնում։ Որքան գեղեցիկ, փարթամ է նա, այնքան էլ անսահման է նախանձս։ Իսկ նա կարծում է, թէ ես պիտի սիրեմ նրան, չըգիտէ՝ որ իմ և նրա մէջ կայ մի ահագին անդունդ, որ ես էլ իր հօր գաւակն եմ։ Անկասկած, ես քարից չեմ ստեղծւած, ունեմ անձնական հպարտութիւն, որով կարող եմ սրբել մօրս անդրգերեզմանային աշխարհում թափւրդ արցունքը։ Մայրս երևաց ինձ անցեալ գիշերը երազիս մէջ և փոխանակ գրկելու ինձ բերկրանքով՝ կանգնեց հեռւում, և սրցունքը հոսում էր երկնային աչերից։ Մի՞թէ այդ վրէժխնդրութիւն կանչող մի նշան չէր... Բայց ինչո՞ւ, մի՞թէ մեղաւոր է նա, այն ատելի աղջիկը, թէ՞ հէնց ատելին միշտ մեղաւոր է թւում... Ո՛չ, անարդարութիւն է այն, ինչ որ անց է կենում մտքովս, պիտի խնայել նրան, մեղաւորը միայն հայրս է։ Բայց ինչ, հօրիցս վրէժխնդիր լինել... սակայն չէ՞ որ մայրս մահւան րոպէին հաշտութիւն առաջարկեց, և ես ընդունեցի... Չէ, այդքան գազանաբարոյ չեմ, դեռ հրէշ չեմ դարձած, դեռ չէ սպառւել գութս, այլ միայն արցունքն է վերացել աչքերիցս. դա դեռ անկման նշան չէ...

Այսպէս էր դատում Լէօնարդօն գլխակոր նստած նարինջենու տակ, երբ յանկարծ աչքին ընկաւ Լարայի տաւերը։ Ետ նայելով՝ տեսաւ նրան կանգնած փիչ հեռւում և ժպտալիս։

—Որքա՜ն հրաշալի է... Ո՜հ, ոչ, խնայել պէտք է սրան։ Պիտի թողնել ընդմիշտ այս դղեակը և հօրս անգամ մոռանալ, եթէ վիճակւած է ինձ մենակ ապրել, թո՛ղ իսպառ մենականամ, թո՛ղ զգամ, որ ոչ ոք չունեմ աշխարհում, որ ինձ ժայռ է ծնել։ Մոռծեց Լէօնարդօն և վեր կենալով տեղից՝ շտապ բարձրացաւ դէպի վեր և մտաւ սենեակը։

Լարան մնացել էր ապշած, վհատութեան մէջ, «Ինչո՞ւ փախաւ ինձնից առանց յետ նայելու. ի՞նչ եմ արել նրան. նա իսկապէս ատո՞ւմ է ինձ...» Եւ չիշողութեան մէջ վերականգնեց այն բոլորն, ինչ որ վերաբերւում էր Լէօնարդոյին. չիշեց, թէ ինչպէս առաջին անգամ եկաւ իրանց դղեակը, ինչպիսի տպաւորութիւն թողեց իր վրայ, ինչպէս բարևելու ժամանակ մի խոր հայեացք գցեց և այլ ևս չէր նայում յայտնապէս, թէև ծածուկ՝ աչքի տակով դիտում էր անտարակոյս, թէև մինչև անգամ քնած ժամանակ մտնում էր ննջարանը և հիանում իր՝ Լարայի չքնաղութեամբ, թէ ինչպէս միայն իր համար ամբողջ օրերով մտախոհութեան մէջ էր ընկած, բայց ամաչում էր և այլն. մնացած բոլոր չիշողութիւնները պատւում էին մի հայեացքի շուրջը, բայց ինչո՞ւ այժմ դժգոհութեամբ հեռացաւ դէպի դղեակը... Արդեօք Լարան էլ բարձրանայ վերև, թէ՞ սպասէ մինչև նրա դուրս գալը, անշուշտ դուրս կըգայ նա. ահա, ահա պատշգամբին հօր հետ միասին կանգնած. ուրեմն զուր չէր սպասում։ Իր պատճառով դուրս եկաւ սենեակից. հօր հետ լօսում է Լարայի գեղեցկութեան մասին, իսկ հայրն իրան է նայում. այո՞... մինչև անգամ մատով ցոյց տւաւ։ «Լա՛րա, Լա՛րա, ե՛կ այստեղ», կանչեց հայրը։ Լարան թռչելու թևեր էր ուզում. «լաւ, լաւ, մի՛ գալ», մէկ էլ ձայնեց վերևից։—«Ա՜հ, երևի Լէօնարդօն բաց է արել իր սիրտը հօրս առաջ, բայց ամաչում է ինձնից»... Օ՜, երևակայութիւն, ինչե՛ր չես կազմակերպում քո ծառայ, քո հլու ստրուկ մտքի միջոցով...

—Կառքը լծեցէ՛ք, հրամայեց հայրը վերևից։

—Ա՜հ... բացականչեց Լարան սոսկալով, և մի սուր կսկիծ բազմեց նրա ներսում։—«Ես այդ չէի սպասում... Բայց գուցէ զբօսնելու են դուրս գալիս... Իսկ ինչո՞ւ հայրս այնպէս տխուր է... գուցէ համաձայն չէ ձեռս տալ... բայց նա այնպէս է սիրում Լէօնարդոյին, չէ կարող չըհամաձայնել... Նա լալի՞ս է. հայրս... Ա՜խ, Աստւա՛ծ իմ, ինչ պէտք է լինի իմ դրութիւնը, եթէ նա դնայ... չէ, էլի կըվերադառնայ, նա ինձ չի մոռանայ...

Կառքը պատրաստ էր. երիտասարդը նստեց նրա մէջ և գրկելով վերջին անգամ լացող հօր հետ՝ կառապանին հրամայեց դուրս քշել բակից։

Լարան քարացել էր։ Ցանկարծակի ինչ որ միտք անելով՝ տենդային դրութեան մէջ դիմեց դէպի հայրը։

—Հայրիկ, նա էլի կրվերադառնալ, այնպէս չէ՞...

—Ո՛չ...

Հօր կտրական պատասխանը կատաղեցրեց աղջկան։ Կառքը դեռ կանգնած էր դղեակից քիչ հեռու։ Սլացաւ Լարան դէպի նա և ձեռքում պահուող նարնջի ոստիկը նետեց Լէօնարդոյի գլխին։ Նա վերցրաւ ոստիկը և յետ շպրտեց, իսկ կառքը մեկնեց անակընկալ կերպով՝ թողնելով Լարային շփոթած, թուլացած, սարսափահար։

—Անդութ... հառաչեց նա հոգու խորքից և մտեցաւ աւազանին։—«Այստեղ ծնունդ է առել դժբախտ սէրս, այստեղ էլ թող մեռնի», ասաց Լարան և նետուեց կոհակների մէջ...

Իրիկնագէմին էր։

Արշակ Աբայեան

ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

(Ակամայ-փիլիսոփայի յիշատակարանից)

Միշտ թարմ, միշտ նոր, միշտ հետաքրքրական—այդ են պահանջում շարունակ գրականութիւնը կեանքից և ընթերցողը գրականութիւնից։ Կարծես թէ նոյնը չէ կեանքը, նոյնը չեն նրա միմեանց յաջորդող երևոյթները, նոյնը չեն յաւիտենական, հիմնական ճշմարտութիւնները։ Բայց չէ,—միշտ թարմ, միշտ նոր, միշտ հետաքրքրական։ Անյագենալի ծարաւ. երբէք մարդկութիւնը չէ կարողանում յագեցնել այդ ծարաւը, թէև շարունակ կանգնած է կեանքի յորդոռատ աղբիւրի կողքին։ Երջանկութիւն է փնտրում մարդը. գըտնո՞ւմ է արդեօք այդ երջանկութիւնը, թէ ինքնախաբէութեան մէջ դեգերում է ինքզինքը կարծելով յաւիտենականութեան մի մասը և միշտ փախուստ տալով և աչքերը դարձնելով այն ակնյայտնի ճշմարտութիւնից, թէ անհատի կեանքը վերջանում է մի օր նոյնպէս, ինչպէս սկսուել էր մի այլ օր։

Սիրոյ պատգամներ տուէք մարդկութեան. բայց կարո՞ղ էք տալ այնպէս, ինչպէս իր կեանքի գնով ուսաւ Աստուածամարդը.—ոչ, այնուամենայնիւ շարունակ պահանջում են—միշտ թարմ, միշտ նոր, միշտ հետաքրքրական...

Կարո՞ղ էք ներկայացնել մարդկային հոգւոյ գաղտնիքներն այնպէս, ինչպէս ներկայացրաւ աշխարհին Ձէքսպիրը—ոչ. բայց շարունակ փորձեցէք ներկայացնել. նորութիւն է փնտռում հետաքրքրքրուղ ամբոխը. այդ յաւիտենական մանուկը, որ լալով ձեռքերը երկարացնում է դէպի տեսած խաղալիկը և ձեռք բերելուց յետոյ՝ դէն է շպրտում նրան՝ միւսը ինդրելով... և այդպէս անվերջ—միշտ թարմ, միշտ նոր, միշտ հետաքրքրական։

Այդպէս՝ մի զարմանալի համերգով յեղյեղւում է կեանքը, երէկւան հինը այսօր նորացնելով և այսօր նորը դատապարտելով հնութեան։

Ինչո՞ւ էք ասում թէ փառաւոր է գինւորի գերեզմանը, մոռացած անհետացած գերեզմանը, որովհետև նրա մէջ թաղուած է նա, որ իր կեանքը զոհեց իր հայրենիքը փրկելու համար։ Տեսէք որքան կեղծիք կայ դրա մէջ. իսկապէս փառաւոր է այն գերեզմանը, որի տակ հանգչում են աշխարհակերի ոսկորները։ Ինչո՞ւ էք կարծում, թէ մարդկութիւնը պարծենում է նրանցով, որոնք իրանց միտքը, հոգին, երջանկութիւնը և կեանքը զոհեցին նրա համար, խաչւեցին, քաշկռտուեցին փողոցներում և թաղուեցին անաղօթք, անծէս, անպսակ. նայեցէք, թէ ինչպէս են ձգտում մարդիկ փառաւոր թաղուելու. նայեցէք, թէ ինչ սոսկալի հակապատկեր է ներկայացնում նրանց դաւանանքը իրանց կեանքի հետ։ Աղաղակում են փառքի սնոտիութեան մասին և փառք են վինտռում, ծաղրում են կռապաշտութիւնը և իրանք են ձգտում կուռք դառնալու։ Եւ միթէ կայ մէկը, որ չ'ասէ թէ սիրեցէք միմեանց և միթէ կայ այդպէս ասողներից մէկը, որ ինքնզինքն ամենից աւելի չըսիրէ։ Ծիծաղելի կատակերգութիւն. միշտ թարմ, միշտ նոր, միշտ հետաքրքրական։

Չատ վատ մարդ էր—ասում են—ժլատ, կծծի, անհիւրընկալ, տնանկեաց, խուսափող հասարակական զարմուհիներից, զուրկ բարեկամներից. բայց ինչ վնաս տաւ նա մարդկութեան. այնչափ միայն, որ ոչ ոքի չարիք չըհասցնելով՝ իր քրտանց աշխատանքով ապրեց, կեանքի զւարճութիւններից զուրկ մնաց և երբ մեռաւ, նրա բնտանիքը և զաւակները նրա արկղի մէջ մի կտոր հաց գտան ուտելու. բայց նա ժողովրդականութիւն չուներ, նրա դագաղին հետևում էին միայն հինգ-վեց հոգի...

Երևելի մարդ էր, ուրախ, զըւարթ, բարի, բարերար—ասում են—բարեկամաց շրջանում միշտ երեւացող, առատաձեռն։ Եւ ահա պակներ և փառաւոր թաղում. իսկ միւս կողմը նայեցէք թէ որքան աւերածներ մնացին...

Միշտ թարմ, միշտ նոր, միշտ հետաքրքրական։

Ակամայ փիլիսոփայ

ՄԱՀՓՈՅԻ

ՏԻԿԻՆ ԼԻԴԻԱ ԹԱՄԱՄՇԵԱՆ

Երեքշաբթի, յունուարի 28-ին, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, Թիֆլիսում վախճանուեց տիկին Լիդիա Թամամշեանը՝ 39 տարեկան հասակում։

Հանգուցեալը պատկանում էր առաջադիմական կուսակցութեան։

Լիդիա Թամամշեանի ջանքերով է բացուել Թիֆլիսի պրոճեսիօնալ դպրոցը, ուր շատ աղջկերք ձեռք են բերում իրանց համար ամենաանհրաժեշտ մի մասնագիտութիւն։ Այստեղ սովորեցնում են նրանց կար ու ձեւ եւ հարիւրաւոր կանայք, աստեղից ձեռք բերած իրանց արհեստով, ապրում են թէ իրանք եւ թէ իրանց ընտանիքը պահում։

Հանգուցեալը Հայուհեաց ընկերութեանն էլ ունի արած ծառայութիւններ եւ նա համարում էր այնտեղ մի որոշ կուսակցութեան պարագլուխ։

Իբրեւ կատարեալ կրթած եւ զարգացած կնոջ, Լիդիա Թամամշեանի շուրջը միշտ ժողովւում են եղել հասարակական գործերով հետաքրքրուղները։

Կարճ ժամանակում Թիֆլիսի կանայք գրկեցին իրանց երկու կուսակցութիւնների պարագլուխներից։ Տ. Կատարինէ Եւանգուլեան եւ Լիդիա Թամամշեան հզօր ոյժեր եւ առաջնորդներ էին մեր կանանց եւ նրանք երբեմն տարբեր հայացակէտներ ունէին, սակայն նրանց գործունէութիւնն անկեղծ էր։

Յայտնում ենք մեր վիշտն ու ցաւակցութիւնը Լիդիա Թամամշեանի անժամանակ մահուան առիթով եւ մաղթում ենք, որ մեր հայուհիները նրա յիշատակը իրանց մէջ վառ պահելու համար, գէթ այսուհետեւ մոռանան կուսակցական կեղծ պատրուակներն ու ձեռք ձեռքի տրուած Լիդիա Թամամշեանի բացած շաւիղը լայնացնեն, ընդարձակեն, առանց խոչընդոտների առաջնորդելու համար, հայ գեղեցիկ սեռը դէպի անկախ, արդար գործունէութիւն եւ աշխատութիւն։

Թաղումը տեղի ունեցաւ շաբաթ, փետրուարի 1-ին։ Հանգուցեալի դիակը ամփոփեցին Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու գաւթում, խունկ բազմութեան ներկայութեամբ։ Պագաղի վրայ դրած էին շատ պսակներ։

ԳԵՂԱՐՒԵՍՏ

Պատմ.

Այս շաբաթ առաջին անգամ Թիֆլիսում ներկայացրին շատ յարմար անսամբլով Խուպերդինգի Հէնզէլ և Գրետէլ օպերան, որի (Գրիմմի ժողովածուից) սիւժետը մի հէքիաթից է վերցրուած։ Այս օպերան ներկայացրել է Եւրոպայի մի քանի և մեր մայրաքաղաքներում։ Բերլինում, Միւնխէնում և Մոսկւայում՝ թատրոնի հանդիսին՝ մենք տեսել ենք այդ օպերան։ Աւելի ենք ունեցել, բացի մեր անձնական տպաւորութիւններից, լսել և կոմպէտենտ անձնաւորութիւնների կարծիքը սրա մասին։ Մեզ վրայ հէնց Բերլինում ֆեյերիայի տպաւորութիւն էր թողել Հէնզէլ եւ Գրետէլ։ Ընդհակառակ իր շքեղ բալէտին՝ թիթեռների պար բռնելուն, որ մեզ մօտ չներկայացրեց, չընդհակառակ այս օպերայի մի քանի երաժշտական, տեղ-տեղ նոյն իսկ սքանչելի կտորներին, այնուամենայնիւ դրա ամբողջութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մանկական հասակի համար մի երաժշտական ստեղծագործութիւն։

Ի դուր է պետական թատրոնի պ. դերեկտօրը վիճաբանում և՝ աշխատում ցոյց տալ, որ այդ օպերան ունի մեծ առաւելութիւններ և այլն և այլն։ Մենք ոչ միայն չենք ժխտում, այլ նոյն իսկ հաստատում ենք պ. Օպոչինինի խօսքերը, որ Հէնզէլ և Գրետէլ շատ դժւար երգելու օպերա է, որ նա բարդութիւններ ունի թէ երաժշտական, թէ բեմական կողմից վերցրած։ Եւ մինթէ կարելի է պախարակել դիրեկցիային, որ նա Հէնզէլ և Գրետէլ օպերան Թիֆլիսի բեմի վրայ ներկայացնել է տալիս։ Մենք մանաւորապէս ուրախ ենք և ցանկալի էր, որ Թիֆլիսի երաժշտասէր մանուկներն ու պատանիները այցելեն թատրոն և տեսնեն այդ օպերան, ինչպէս յատուկ իրանց համար գրուած և ստեղծագործուած։ Կրկնում ենք՝ Փիլ Վերն, Ալֆոնս Դօդէ իբրև մանկական գրողներ, շատ դժւարութիւնների են հանդիպում, մինչդեռ Զօլա և այլն, մի օրում կարող են տասնեակ երեսներ լրցնել։ Օրինակ վերցրէք հէնց մեր Ղ. Աղայեանի Արեգնաշանը, Տորք Անդերը, մինթէ Բաֆֆիի, պ. Պռօշեանցի Սկիզբն Երկանց, Սամէլ և պ. Ղ. Աղայեանցի Արեգնազանը նոյն հեշտութեամբ են գրւում։

Ա. Դօդէի Մայրը գրած է երեխաների համար, բայց որ հասակաւորը մեծ հետաքրքրութեամբ չէ կարդում այդ գրածքը։ Նորերս Պարիզում լոյս տեսած Face au Drapeau Փիլ Վերնի կամ թէ l'Ecolier d'Athenes Անդրէ Լօրիի՝ մինթէ միայն մանուկներն են կարդում։

Ի վերջոյ պէտք է ասել, որ Խումպերդինգը հետևող է Վագներին։ Նա միշտ ջանում է, որ երաժշտութիւնը՝ ձայնը արտայայտէ և խօսքի իմաստը, նիւթի բովանդակութիւնը։ Եթէ այդ ընդունենք իբրև հիմք Խումպերդինգի երաժշտական ստեղծագործութիւնների, ուրեմն աւելի քան պէտք է խոստովանել, որ Հէնզէլ և Գրետէլ մանկական հասակի համար է վերածած երաժշտութեան, քանի որ սիւժէտը վերցրած է մանուկների համար մի հէքիաթից։

Թիֆլիսի բեմի վրայ Հէնզէլ և Գրետէլ օպերան տրւեց բաւականաչափ վայելուչ. տ.տ. Մարշադ, Դինկուլով՝ երեխաներ և Սիւնենբերգ՝ քաւթաւ-

կախարդ՝ շատ լաւ էին։ Ոչ պակաս լաւ էր և պ. Մաքսակով։

Վաղը, երկուշաբթի երրորդ անգամ ներկայացնելու են Հէնզել և Գրետէլ և անշուշտ թատրոնը լիքը կըլինի շատ երեխաներով։

Երեքշաբթի երաժշտական խմբի տաղանդաւոր դեկավար պ. Տրուֆֆիի բենեֆիսն է։ Պիտի ներկայացնեն Թիֆլիսում առաջին անգամ Մանոն Լէսկօ օպերան, երաժշտութիւնն Պուչինի։

Պ. Տրուֆֆին Թիֆլիսի երաժշտասէրների մէջ ունի մեծ և արժանի ժողովրդականութիւն։ Մենք չենք երկբայում, որ այդ օրը նրան մեր հասարակութիւնը կըմատուցանէ ըստ արժանւոյն իր յարգանքը։

—

Երեքշաբթի, փետրուարի 4-ին Ազնըւականների թատրոնում Հ. Ք. Ը. օգտին իշխանուհի Մարիամ Թումանեանցի նախաձեռնութեամբ քաղաքիս փափկասուն տիկիններն ու օրիորդները պիտի ներկայացնեն Խաճում կոմէդիան։ Անշուշտ շատ ցաւ կըզգան նրանք, որոնք զրկած կըլինեն այդ ներկայացմանը ներկայ լինելուց։ Տոմսակները վաղուց սպառուած են։ Ներկայացումն անցնելու է յաջող, որովհետև բոլոր մասնակցողներն էլ մի առանձին ինդուլիազմով էին կրկնութիւններն անում։

—

Չորեքշաբթի երեկոյեան Թիֆլիսի արքունական թատրոնի վարչութիւնը նշանակել էր մի ներկայացումն ի յիշատակ Պուշկինի մահուան վաթսունամեակի. սակայն տեղական ռուս հասարակութիւնը, ինչպէս երևում է, դպրոցից դուրս գալուց յետոյ արդէն մոռացել է իր ազգի պարծանք պօէտին։ Թատրոնը դատարկ էր։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐԸ

Լրագիրները այժմ այնպիսի անհեթեթ տեղեկութիւններ են սկսել հաղորդել, որ կատարեալ ջուր մաղել պէտք է համարենք։

Նմուշի համար բերում ենք մի քանի օրինակներ.

Times, Standard, Daily News մեծ հրճւանօք և ցնծութեամբ ողջունում են անգլիական քաղաքականութեան յաղթանակը արևելեան հարցի առթիւ։ Հայց թէ ինչումն է կայանում այդ յաղթանակը, գոնէ մեզ յայտնի չէ։

Մենք այսքանը հաստատ գիտենք, և ժամանակին էլ հաղորդեցինք, որ Ռուսիան արտօնութիւն է ստացել Տրապիզոնից մինչև Էրզրում երկաթուղու գիծ տանելու։ Թէ ինչ մեծ նշանակութիւն ունի այդ ճանապարհը, պէտք է նայէք քարտէզի վրայ։ Ռուսիայի հզօր արձիւը իր մի թևի տակ Պարսկաստանը, միւս թևի տակ Տաճկաստանը առած՝ սլանում է ընդարձակ ցամաք ուղիով ուղղակի Հնդկաստան։

Нов. Вр. հաղորդում է, որ սուլթանը վերջ ի վերջոյ կըհրաժարւի ընդունել պետութիւնների մշակած ծրագիրը և կըդիմէ Ռուսիային, խընդրելով, որ Տաճկաստանի ֆինանսները նա կարգի բերէ և ստանձնէ կարևոր րէֆորմները սուլթանի պետութեան մէջ մտցնելու։ Այդ էլ պէտք է չըմոռանալ, որ րէֆորմների կարևորութիւնը պէտք է Պետերբուրգը արժան դատէ։

Մտադրութիւն կայ տաճկաց ֆինանսների մինիստրի օգնական նշանակել ռուս փորձած մի ֆինանսիստ։

Լրագիրները ենթադրում են, որ եթէ Ռուսիան Տաճկաստանի այս առաջարկը մերժելու լինի, այն ժամանակ միայն կըդիմեն Ֆրանսիային։

Յոյս են տածում, որ Գերմանիան չի դիմադրիլ Ռուսիային ընդունել Տաճկաստանի խնդիրը և նրա պատճառով իր լաւ յարաբերութիւնը չի կըտրիլ Ռուսիայի հետ։

Չընայած նրան, որ Աւստրօ-Ունգարիայի և Գերմանիայի ու Իտալիայի մէջ դաշինք կայ, այնուամենայնիւ, Ֆրանց Յովսէփ կայսրը կոմս Գօլուխովսկու հետ ապրիլի կիսին Պետերբուրգ այցելութեան են գալու։

Վիլհէլմ կայսրը և Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ Փորն էլ ամառն են գալու Պետերբուրգ։ Անշուշտ այդ այցելութիւններն աւելի կամրացնեն Եւրոպայի բարեկամութիւնը մեր կայսրութեան հետ և կըտեսնեն նրանք անձամբ իրանց անզօրութիւնը Ռուսիային դիմադրելու և խաղաղութիւնը ընդ միշտ պահպանելու համար Ռուսիայի ծրագիրները կիրագործւեն։

ԼՈՒՐԵՐ

Յուն. 21-ին ֆրանսիական ակադեմիայի անդամ պ. Վանտալ մի conference կազմեց Պարիզում հայկական խնդրի վերաբերմամբ։ Ահագին դահլիճը հանդիսականներով լիքն էր. դրանց թւում կային մինիստրներ, դիւանագէտներ և հրապարակախօսներ։ Ներկայ էին պ. պ. Վօգիւէ, Լէռւա-Բօլիէ, Ժօզէֆ Բէյնախ, Հանրի Լէվէդան և ուրիշ նշանաւոր ֆրանսիացիք։ Նախագահում էր յայտնի կոմս դը Մեօն երեսփոխական ժողովի անդամը, որ այս տարի պարլամենտի բացման առաջին օրերը հայկական հարցի մասին հարցապնդումն արաւ մինիստրութեան։ Խօսելով տաճկական գազանութիւնների մասին, պ. Վանտալ մատնացոյց եղաւ Ֆրանսիայի պարտաւորութեանց վրայ, պահանջելով որ նա պաշտպան կանգնի արևելեան քրիստոնեաներին, ինչպէս կոչում է նրան իր պատմական աւանդութիւնը։ Պատի վրայ կպցրած էր հետևեալ աղիւսակը.

Տաճկական սպանութիւնների հարիւրամեակը

1822 թ. յոյներից սպանել են 50,000 հոգի, 1850 թ. նեստորականներից՝ 10,000, 1862 թ. մարոնիտներից 10,000, 1894—96 թ. թ. հայերից՝ 300,000 հոգի։ Ընդամենը կոտորած են քրիստոնեաներ՝ 381,000 հոգի։

—

Չորեքշաբթի, յունւարի 29-ին Ա. Լէքսանդրեան այգում գտնւող գինւորական եկեղեցու մէջ կատարւեց ռուս-բանաստեղծ Պուշկինի հոգեհանգիստը, որովհետև այդ օրը լրանում էր նրա մահուան օրից վաթսուներորդ տարին։ Հոգեհանգստին ներկայ էին Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկի, գրաքննական կոմիտետի նախագահ Հակկէլը, թատրոնի դիրեկտորը, տեղական ռուս ու հայ թերթերի ներկայացուցիչներն ու շատ քիչ հասարակութիւն։ Թիֆլիսաբնակ ռուս կրթւած հասարակութիւնը, բացի վերոյշեալ պաշտօնական անձինքներից ու մի քանի ուսուցիչներից՝ փայլում էր իր բացակայութեամբ։

—

Սուլթանի թիկնապահ Թեֆիկ-բէյը Եւրոպա փախչելուց առաջ ներկայացրաւ տաճիկ կառավարութեան րէ-

ֆորմների ծրագիր։ Ջատից-քչից ազդեցիկ պարտօնեաներն էլ վախենում են բացարձակ խորհուրդ տալ սուլթանին։

—

Կ. Պոլսում դեսպանների խորհուրդը այն աստիճանի գաղտնի է, որ նիստերի արձանագրութիւնները ֆրանսիական դեսպանը ինքն է անձամբ գրում։

—

Լրագիրները հաւատացնում են, որ Կ. Պոլսում անկարգութիւններ ծագելու դէպքում, պետութեանց միացեալ նաւատորմիղը Բոսֆոր կը մտնի։

—

Օրմանեան պատրիարքիհամար հերթական հարցերից մէկն էլ Սսի կաթողիկոսի հարցն է։

—

Caulois-ի ասելով, ծրագիրները սուլթանին ներկայացնելիս պէտք է պետութիւնների կողմից խընդրեն, որ տասն օրւայ ընթացքում սուլթանը իր պատասխանը տայ։ Ասում են՝ սուլթանը Պարիզի իր դեսպանի միջոցով հաղորդել է Հանոտոյին, որ նա ամեն ջանք գործ կը դնէ, որպէս զի Ֆրանսիայի առաջարկած ծրագրերը ի կատար ածէ։

—

Տաճիկ կառավարութիւնը իր ռմբաձիգ և հեծելազօրքի համար Ռուսիայից է ձիաներ առնում։

—

Յունաց պատրիարքի դէմ Կ. Պոլսում, իրանց մայր եկեղեցու առաջ, ցոյցեր են եղել։

—

Կրետէում արիւնհեղութիւնները կրկին սկսւեցին, որովհետև լուրեր են տարածւած, թէ ամբոխը յարձակւել և սպանել է 27 քրիստոնեայ, ուստի Կանէայի վալին զօրքին հրամայեց յարձակւել ամբոխի վրայ։ Ընդհարումն շարունակւեց մինչև երեկոյ. սպանւեցին 20 զինուոր. շատ տեղերում հրդեհ առաջացաւ։ Հիւպատոսները չըկարողացան Հալէպպոյից դուրս գնալ։ Գիշերը կռիւը դադարեց, բայց հրդեհը դեռ շարունակւում է։ Անգլիական, իտալական և ֆրանսիական մարտանաւերի հրամանատարները ցամաք իջան, աշխատում են հրդեհը շիջեցնել և փախչողներին կանգնեցնել։

—

Համաձայն Նորին Կայսերական բարձրութիւն Մոսկւայի ընդհանուր նահանգապետի առաջադրութեան, Մոսկւայի քաղաքային խորհուրդը որոշել է հանգանակութիւն բանալ յօդուտ Տաճկաստանից փախած հայերի։

—

Պ. Ուիտալի նախագահութեան ներքոյ եղող հայկական նպաստամատոյց յանձնախումբը 11,000 ֆունտ ստերլինգի մի նոր օգնութիւն է ընդունել։ Այդ գումարից 7,000-ը Ամերիկայից է ուղարկւել, իսկ մնացեալը Ֆրանսիայից և Գերմանիայից։

—

Ռուսաց արտաքին գործերի մինիստր կոմս Մուրաւեովի Պարիզ եղած ժամանակ տաճկաց դեսպանը ունկնդրութիւն ուներ կոմս Մուրաւեովի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի հետ։ Այս խորհրդակցութիւնը դեսպանի հետ եղել է առանց որևէ վրկայի ներկայութեան։

Բարեգործ. ընկ. Ջուշու ճիւղը հայ գաղթականներին կերակրելու համար մի ճաշարան է բացել և կառավարիչ ընտրել պ. Լևոն Աթաբէգեանին։

—Թիֆլիսում պարսից հիւպատոս է նշանակւած Մուրթուզ-խան Մուհթազեգուլ Մուլք։

—Ժանտախտը Բոմբէյում նւազում է և անցնում դէպի հիւսիսային Ասիա։

—Զինւորական մինիստրի կարգադրութեամբ բժշ. Լունկևիչ Թաւրիզ պիտի գնայ ժանտախտի դէմ մաքառելու համար։

—Երէկ, փետրւարի 1-ին Թիֆլիսի բոլոր բժիշկները քաղաքային վարչութեան կողմից հրաւիրւած էին խորհրդակցելու ժանտախտի դէմ միջոցներ ձեռք առնելու մասին։

—Ֆիւղտոնտեսական ընկ. շինութեան մէջ այսօր երեկոյեան նիստ է նշանակւած Երեխաների կրթութեան նպաստող ընկերութեան մասին նախապատրաստական խորհուրդ անելու և ընկ. ծրագրի մանրամասնութիւնները քննելու համար։ Նոր, համակրելի ընկերութեան հիմնադիր անդամների թիւը 150-ի է հասնում և նրանց մէջ կան մանկավարժներ, բժիշկներ և այլն։

—Պուշկինի չիշատակին Թիֆլիսում մրտադրութիւն կայ մանուկների համար մի ապաստանարան հիմնելու։

—Կովկասեան մուզէյի առարկաների վերաբերեալ ցուցակներ, ուղեցոյցներ տպագրելու համար հինգ տարի շարունակ հրամայւած է պետութեան գանձարանից տարեկան 2500 ր. տալ։

—Ժանտախտի պատճառով եւրոպական և մեր բօրսաներում զգալի փոփոխութիւնների են ենթարկւում զանազան ակսիօներական բաժնետոմսեր, ֆոնդեր և այլն։ Կերօսինի գինը, կարանտինի պատճառով, սաստիկ ընկել է։ Ընկել է նոյնպէս ուրիշ շատ մթերքների գինը։

—Բերլինում կազմւել է մի բաժանորդագրական ընկերութիւն 5,000,000 մարկ դրամագլխով, որի նպատակն է հարաւային Ռուսիայից թիւրիմ արտահանել։ Օգեսայի թերթերը լսել են, որ այդ նպատակով ընկերութիւնը շուտով մի ներկայացուցիչ կընշանակէ Կովկասում։

Խառն լուրեր

Կ. Պոլիս.—Յունաց սինոդի 7 անդամներ պատրիարքարանից դուրս նիստի հաւաքւեցին և պատրիարքարանի վերջին դրութիւնը յայտարարեցին հերետիկոսական։

— Տաշքինդ, 26 յունւարի.—Անդրկասպեան երկրի կառավարչից տեղեկութիւն է ստացւած, որ ժանտախտ է երևացել Ղանդահարում։

—Պարիզ.—Կրետական խնդիրը շարունակում է խիստ մեծ մտահոգութիւն պատճառել, մանաւանդ, որ Յունաստանում մտքերի յուզումը սաստկանում է։

—Կ. Պոլիս.—Հասարայում ժանտախտի նշաններ արտայայտելով մեռաւ Կարաչիից եկած մի հնդկացի կին։ Մի ուրիշ հնդկացի կին, որի հիւանդութիւնը կասկած է ազդում, հիւանդանոցն է տարւած։ Կամարանի հիւանդանոցում գտնւում է հասարայից եկած մի արաբ, որ կասկած է ազդում։

—Հերլին.—Չրաման եղաւ շուտափոյթ զինել «Կայսրուհի Աւգուստա» յածախաւը, որ պիտի գնայ Կրետէի ջրերը։

—Կանէա,—Յունւարի 24-ին երեկոյեան քաղաքը հանգիստ է, բայց հրդեհները շարունակւում են։ Քրիստոնեայ ընտանիքներն ապաստանել են նաւերի վրայ։ Հարևան մի քանի արւարձաններ բռնւած են կրակով։ Ապստամբների և զօրքերի մէջ կատաղի հրացանաձգութիւններ են լինում։ Չալէպպոյի մօտ 700 զինւած քրիստոնեաներ պատրաստւում են կռւելու զինւած մահմեդականների դէմ։ Իրերի դրութիւնը Թետիմնոյում և Կանդիայում վտանգաւոր է։

Ռ. Չ. Գ.

—Հայրամի տօներին Կ. Պոլսում մինիստրների փոփոխութիւններ է լինելու։ Բէուֆ փաշան է մեծ վիզեր նշանակելու։

—Լորդ Սոլիսբրին սկզբունքով դէմ է պետութիւնների երաշխաւորութեամբ Տաճկաստանի համար փոխառութեան։

—Կանանց քաղաքական իրաւասութեան հարցը Անգլիայում վճռւած է։ Կողմնակից են եղել և պաշտպան

այդ հարցին ի միջի այլոց Վիկտորիա թագուհու փեսայ մարկիզ Լօրն, երեք միևիստր և այլն։ Times հակառակ է կանանց այդ իրաւասութեան։ Անգլիական ազատամիտ կուսակցութեան պարագլուխը մի ընդարձակ ճառով բողոք յայտնեց այդ նոր կանոնի դէմ, ասելով, որ անգլիական սահմանադրութիւնը սրանով ենթարկուում է հիմնական փոփոխութիւնների և այսուհետև Անգլիան կունենայ ամազոնների սահմանադրութիւն։ Անգլիայում 1.200,000 հոգով կանայք աւելի են տղամարդիկներից։ Ուրեմն երկրի քաղաքական ղեկը կարող են կանայք իրանց ձեռքն առնել։ Standard և Daily News կանանց ընտրողական իրաւունքի կողմնակից են։

Պարագաներ

Պարիզի լրագիրները հաղորդում են, որ ֆրանսիական ժողովրդական լուսաւորութեան մինիստրը մտադիր է ոչնչացնել ընակալաւորի աստիճանի համար սահմանած քննութիւնները, որ հաւասար է ռուսաց գիմնազիաների համար սահմանած դասընթացին։ Այդ առիթով Caulois-ի աշխատակիցը բացատրութիւն է ունեցել շատ նշանաւոր գրողների հետ. մեծամասնութիւնը համաձայն է ոչընչացնել հարցաքննութիւնները։ Պրանց թուումն են Ալֆոնս Դոդէ և Էմիլ Զոլա։

մեր պատկերները

Առատութիւն եւ աղքատութիւն

Կշտացած և ինքնաբաւական բադը հպարտ-հպարտ նայում է իր առատ նախաճաշիկի վրայ, իսկ նրա վերևում ճիւղի վրայ շարած են մանրիկ ճրնճղուկները... Նրանք սպասում են մի յարմար րոպէի, որպէս զի գէթ մի փոքր պատառ փախցնեն երջանիկ փետրաւորի նախաճաշիկից և դրանով յագեցնեն իրանց քաղցը...

Սակայն այդ խորամանկութիւնը նախագուշակեց բադը...

Նա յանկարծ վերև բարձրացրեց իր գլուխը և բարձր բղաւեց այդ անկոչ հիւրերի վրայ։

Ճնճղուկներից մեկը կարծես վէճի է մտել. ագահ բարեկիցները լսում են ուշադրութեամբ։

Չմուտ նկարիչը բաւական գեղեցիկ կերպով դուրս է բերել այդ կոմիկական տեսարանը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Մեր մշտական շատ ընծայողներից, որոնք մինչեւ յունւարի 1-ը չեն եղել նորոգած իրանց ընծայողագրութիւնը՝ տրտունջներ ենք լսում, որ նրանց չենք ուղարկել Տարազ №№ 1—2։ *Նոյն տրտունջը յայտնում ենք եւ մենք. ի՞նչու մեր մշտական ընծայողները, եթէ կամք ունէին ստանալ մեր թերթերը չէին ամսագրում նորոգել իրանց ընծայողագրութիւնը։ Կարծում ենք, ժամանակ է, որ հայն էլ իմանայ թէ հայ թերթը իրաւունք ունի գոնէ պահանջելու, որ եթէ իր գոյութիւնը անհրաժեշտ է համարում ընթերցողը, նա ինքը դիմէ նրան իր պատւէրով եւ թոյլ տայ, որ հայ հաստատութիւնը գէթ անհատից մի ամենափոքր աստիճան բարձր լինի։ Որքան էլ մեծ լինի անհատը, նա ընծայել իրաւունք չունի սպասելու, որ հրատարակիչը իր գործը կանխաւ նրա ոտքը տանի եւ փոխարէնը սպասէ մի քանի գրոշներ։*

Տարազի *ներկայ №-ում* թղթակցութիւնների ցուցակը *վերնագրով տպագրում ենք մեր ընծայողների ստացած նամակներից մի քանիսը։ Տեսէք թէ հայը ինչպէս է իր յարգանքը յայտնում հայ թերթին եւ խրոխտում, սպասնում նրան ու խնդրում՝ ձրի թերթը ուղարկել իրան։*

Յայտարարում ենք ի գիտութիւն մեզ անթիւ նամակներով դիմող անցեալ 96 թ. ընծայողներին, որ նրանց ոչ մի առաջարկը, մեր յայտարարած պայմաններից դուրս, *ի նկատի չեն առնւիլ։*

Բաւական է, որ անցեալ 96 թ. խմբագրութիւնս իր կողմից 157 օրինակ Աղբիւր-Տարազ *ձրի ուղարկել է զանազան հաստատութիւնների եւ անձանց ու գուցէ մի այդքան հոգու վրայ էլ ապառիկները է մնացել։*

Թղթակցութիւնների ցուցակ

Մեծապատիւ պ. խմբագիր.

Ձեր 1896 թւի «Ալբոմ-Ալմանախ» պրէմիան իր շքեղութեամբ շատ անճ. նաւորութիւնների համար անհրաժեշտ պահանջ է դարձել ունենալ իր սեղանի վրայ, ուստի խնդրում եմ բարեհաճէք յայտնել թէ որքան կարժէ այդ պրէմիան կազմած, որպէս զի ըստ այնմ յայտնեմ ձեզ թէ քանի օրինակ է հարկաւոր։

Ձեզ յարգող ուսուցիչ Կ. Ղ.
1896 թ. 22-ն դեկտ.
ի ք. Ղարասուբազար

—

Մեծ. պ. խմբագիր.

Դեկ. 26-ին Ձեզանից ստացայ սրբազան Իգմիրլեանի պատկերը ճենապակու վրայ։ Ես ձեզ յայտնում եմ խորին շնորհակալութիւնս, որ ձեր բաժանորդներին ուղարկում էք այդպիսի գեղեցիկ պրէմիաներ, որպիսին է Իգմ. սրբազանի պատկերը և Ալբոմ-Ալմանախը։ Աղբիւր-Տարազ ստացել եմ կանոնաւոր մինչև այժմ։ Ես ձեզանից շատ գոհ եմ։

Ցարդանօք Կ. Ե.
Ղզլար, դեկտ. 21.

—

Մեծապատիւ պ. խմբագիր.

Ամսոյս մէկին ստանալով քահանայական կոչումն, ցանկանում եմ ժողովրդիս ձեր խմբագրութեամբ հրատարակող «Տարազ եւ Աղբիւր» ծերթերում արձարձած ազգօգուտ մտքերի հետ ծանօթացնել, սակայն անծեռնհաս լինելով ուղարկել պատւական ծերթերիդ բաժանորդագինը, կը խնդրէի մեծապատիւ խմբագրիդ, բարեհաճէիք ուղարկել մի օրինակ ձրիաբար, «մինչև առաջիկայ տարին» հետեւեալ հասցէով։

Աղէքսանդրապոլ՝ ուղարկել Հոռոմ նորընծայ քահանայ №№։ Խնդիրս կատարած տեսնելով ինձ մխիթարած կը համարեմ։

Ձեզ օրհնող նորընծայ
(ստորագրութիւն)
29-ն դեկտ. 96 թ.
Հոռոմ.

—

Ցարգելի խմբագիր!

Խնդրեմ յայտնէք, չ'ուղարկելով ժամանակին ս. Իգմիրլեանի պատկերի ճանապարհածախսը, մեզ մի գործեցի, որ գրում էք թէ 2 ր. ետ ստանամ, երբ և ումից, եթէ որ 96 թւի Աղբիւր-Տարազը

ապառիկ ստացած ըլլայի և հիմա ուղարկէի փողը, պ՝տի չ՝ընդունէիք մի արդեօք։

Ցարգանօք Մ. Ա.

Բաթում, 5 յուն.
97 թ.

—

Մեծարգոյ խմբագիր.

Ես մինչև այսօր չեմ ստացել ս. Իզմիրլեանի նկարը, որի համար պիտի ուղարկէի 2 ր. ճանապարհի ծախսն, ուստի եթէ կ՝ուղարկէք այդ նկարը, ես կուղարկեմ 5 ր. և կըստանամ միայն Տարազ շաբաթաթերթը, իսկ եթէ չէք ուղարկել կըդադարեմ ստանալուց, իսկ ես մօտ մի ամիս կըլինի, որ այստեղ չէի, Կազդման էի գնացել։

Թերթիդ համակրող
(Ստորագրութիւն)

1897 թ. 10-ն յուն.
Իգդիր.

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ղարս. Ե. Լ. Աղբիւր-Տարազի 97 թ. պրեմիաները արժեն 3 ր., վերադիր վճարով 3—20 կ. եթէ համաձայն էք՝ հաղորդեցէք։

Թիֆլիս. «Մշակ» լրագրին. Դուք չէք դադարում ձեր ստոր վարմունքը շարունակելուց։ Փախչում էք, խոյս էք տալիս հրապարակական բացատրութիւններ տալուց, բայց չէք դադրում եւ քարեր շպրտել մեր բակը։ Շաքիր-փաշի, Նազըմ-փաշի, Հարդուդիմէոս էֆէնդիի, Աշըղեանի, սուլթանի եւ սրանց նման անծանց հետ զուգընթաց տպագրել ենք անվեհեր ս. Իզմիրլեան, Շիշմանեան, Ներսէս Վարժապետեան, Ալէաթեան, Խարախանեան հայ բարձրաստիճան հոգեւորականների, Գլադստընի, տիկին Գլադստընի, Ֆիլիպ Կերրիի, մեծ եւ աղնիւ հրապարակախօսների պատկերները։ Ասացէք, պահանջում ենք, մինչեւ իլիւստրասիօնը պէտք է տպագրէ դրական անձնաւորութիւնների պատկերները։ Եթէ այո, էլ ինչու էք դուք ձեր Թերթի իւրաքանչիւր №-ում տասը տեղ սուլթանի եւ նրա նմանների անունները տպագրում։

Պահանջում ենք, որ ասէք, արդեօք Տարազին մեղադրում էք տանկամոլութեան մէջ, թէ այլ է ձեր նպատակը...

Զեզ, ձեր մի շարք վարմունքների համար, անւանեցինք ստոր, զրպարտիչ։ Բացատրութիւններ պահանջեցինք, դուք լռեցիք։ Այժմ կրկին ենք ձեզանից բաւականութիւն պահանջում։

Մենք ասում ենք, որ այժմ, դուք, Մշակի դեկավարներ, միմիայն ձեր զրպարտին էք ծառայում, հայ ազգի վիճակը եւ բարօրութիւնը ձեզ այնքան է հետաքրքրում, որքան չինաց կայսրի կեանքը։ Ասացէք, կարծում էք հերքել, որ այդպէս չէ։

Ինչու պապանձեցիք, երբ Ալբոմ-Ալմանախը լոյս տեսաւ։ Միքայէլ Նալբանդեանի մեծադիր պատկերն այժմ պրէմիա տալիս, ինչու վախենում էք եւ չէք խօսում։

Հագու. Լ. Ե. Ուրեմն նոր էք համոզւում, որ այժմեան Մշակը աշխարհից բէխաբար, չինական պատերով շրջապատած, կորցնում է իր նշանակութիւնը ազգի մէջ։ Փառք Աստուծոյ, որ ինքներդ էլ էք տեսնում։ Кавказъ-ի այժմեան խմբագիր պ. Վելիչկոյին արած փառաբանութիւնները, որ տպագրեց Մշակը իր էջերում, աւելի քան լաւ ապացոյց են, թէ այդ Թերթի խմբագիրները ինչպէս են ճանաչում այն մարդկանց, որոնք ստանձնում են պաշտօն Կովկասում եւ այն էլ դեռ այնպիսի մարդիկ, որ պաշտօնակից պիտի լինին եւ իրանց, Մշակի այժմեան խմբագիրներին։

Կրասնավոդսկ. տ. Մ. Հ. Ձնորհակալ ենք, ստացանք։

Երուսաղէմ. Ս. Ուղարկել էինք Կ. Գոլիս երեք օրինակ այդ պատկերից դեռ անցեալ տարի ապրիլ ամսին։ Օրերս մի օրինակ պաստ կըզցենք ուղղակի այդտեղ։

Լոնդոն. Ա. Լ. Ինչու Թղթակցութիւններ, ֆելիէտոններ չէք ուղարկում։

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Այսօր, կիրակի, փետրուարի 2-ին կըներկայացնեն **ՀՈՒԴԵՆՈՑՆԵՐ** խոլերէն. Երկուշաբթի՝ **ՀԷՆԶԵԼ և ԴՐԵՏԵԼ**. երեքշաբթի սպ. Տրուֆֆիի բենեֆիսին՝ **ՄՈՆՈՆ ԼԷՍԿՕ**, օպերա-երաժշտ. Պուչինի (Թիֆլիսում) դեռ չըխաղացւած։

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրւած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր և Տարազի 96 և 97-թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Գիմել՝ Тифлисъ, Арбюръ кам Таразъ.

ԹԻՖԼ. ԱԶՆԻԿ. ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի փետրուարի 4-ին

ԲՕԳՈՒՏ ՀՈՑՈՅ ՖԼԲԳՈՐԹ. ԸՆԿԵՐՈՒԹԻԹ.

ՀԱՅ ԹԱՏԵՐԱՍԻՐՆԵՐԸ ԿԸՆԵՐԿԱՑԱՑՆԵՆ

ԹԱՆԱՔԻՄ

Կոմ. 3 գ. և 4 պ. Հեղ. Ա. Յագար. թարգ. Արաքսեանի։

ԴԻՐՕՂՈՂ ԱՆՁԻՆՔ

Մխիթիչ Սուտկոտրեանց, իշխարազար . Կ. Գիւլնազարեան
Սօնա, նրա աղջիկը . . . . . Իշխ. Ս. Ամիլախւարի
Սաուա, Սօնայի մեծ մայրը . . . Օր. Ն. Օհանեան
Տէրտէրինց Ակոփ, Մկրտչի բարեկամը և դրճակատարը . . . . . Ա. Մանդինեան
Իշխան Վանօ Փանտիև. . . . . Ն. Սունդուկեան
Իշխանուհի Թեկլէ, սորա քոյրը. Ս. Խօջամիրեան
Կօսէ Փանտիև, Վանոյի եղբօրորդ. Վ. Լունկեվիչ
Մանուկ—Վանոյի ծառան. . . . . Յ. Տէր-Դաւթեան
Քաբատօ Խանում } մօցիքուլներ . . . . Օր. Մ. Ալիբէկեան
. . . . Իշխ. Ս. Արղութեան
Երկայնաբազուկ.

Հիւրեր, սազանդար և այլն։

ՍԿԻԶԲՆ Է 8 ԹԱՄԻՆ 1—1

Еженедѣльная газета
Ежемѣсячный журналъ
Ежедневная газета

НЕДѢЛЯ
КНИЖКИ НЕДѢЛИ
РУСЬ (II-ое изданіе)

9 рублей въ годъ съ пересылкой.

7 руб. въ годъ съ пересылкой (съ ежемѣсячнымъ приложеніемъ).

всѣ три изданія вмѣстѣ (безъ прилож.) **13 р.** въ годъ съ пересылкой.

За приложеніе еженедѣльнаго **Иллюстрированнаго Листка** приплачивается **два** руб. въ годъ.
Всѣ четыре изданія вмѣстѣ—„Недѣля“, „Книжки Недѣли“, „Русь“ и Иллюстрированный Листокъ“—**15** р. въ годъ съ пересылкой.

Подписка на 1897 годъ продолжается.

Допускается разсрочка. Подписка принимается въ конторѣ редакціи „Недѣли“, Спб., Литейная, 9.
Издатель **В. П. Гейдебуровъ.** Обм. 3—3.
Обм.

Ежемѣсяч. иллюстр. журн. для дѣт. школ. возр.

XVI „РОДНИКЪ“ XVI

и педагогическій листокъ

„ВОСПИТАНІЕ и ОБУЧЕНІЕ“.

«Родникъ» въ 1897 году будетъ издаваться подъ тою же редакціею, въ томъ же духѣ и направленіи, что и въ минувшія 15 лѣтъ.

„Родникъ“ выходитъ перваго числа каждаго мѣсяца книжками большого формата, со многими рисунками въ текстѣ, портретами и отдѣльными картинками.

Вмѣстѣ съ **«Родникомъ»** можно получать ежемѣсячный педагогическій листокъ **«Воспитаніе и Обученіе“**, посвященный вопросамъ **семейнаго воспитанія, домашняго обученія и дѣтскаго чтенія.**

Въ листкѣ помѣщаются труды библіографическаго отдѣла Педагогическаго музея в.-учебн. заведеній и протоколы „Родительскаго кружка“.

„Родникъ“ рекомендованъ, одобренъ и допущенъ *учеными и учебными Комитетами: Свят. Синода, Собств. Е. И. В. канцел. по учрежд. Императрицы Маріи, Главн. Управл. военно-учебныхъ заведеній и Мин. Нар. Просв.* **Удостоены:** *1) почетнаго диплома на педагогической выставкѣ Общества Трудолюбія въ Москвѣ, 2) похвальнаго отзыва на первой Всероссійской выставкѣ печатнаго дѣла, 3) диплома второго разряда на Всероссійской выставкѣ Нижнемъ Новг. 1896 г.*—**Признанъ необходимымъ** *для выписки въ ученическія библіотеки городскихъ училищъ и учительскія библіотеки народныхъ школъ за всѣ годы существованія, т.-е. съ 1882 г. (См. «Журналъ Мин. Нар. Просв.», августъ 1895 г.)*

Условія подписки на 1897 годъ прежнія:

Съ доставкой и пересылкой.	На годъ.	На 6 мѣс.	На 3 мѣс.
На одинъ „Родникъ“	5 р.	2 р. 50 к.	1 р. 25 к.
На „Родникъ“ и педагогическій листокъ. „Воспитаніе и Обученіе“. .	6 „	3 „ — „	1 „ 50 „
За границу.	8 „	4 „ — „	2 „ — „
Отдѣльно на педагогическій листокъ. „Воспитаніе и Обученіе“. .	2 „	1 „ — „	— „ 50 „

Адресъ конторы: С.-Петербургъ, Невскій, 106, при „Книжномъ магазинѣ“ Н. И. Морева.

За издателя **Н. Моревъ.** Редакторъ **Алексѣй Альмединген.**

Открыта подписка на ежемѣсячный журналъ съ картинками **„Читальня Народной Школы“** (10-й годъ изданія). Цѣна съ доставкой и перес. 3 рубля въ годъ. Обм. 3—2.

„БИРЖЕВЫЯ ВѢДОМОСТИ“

ПОДПИСНАЯ ЦѢНА **со всѣми приложеніями:** съ пересылкою **на годъ** **4** РУБ.

ВТОРОЕ ИЗДАНІЕ

ПОДПИСНАЯ ЦѢНА со всѣми приложеніями съ пересылкою **на три мѣсяца.** ГЛАВНАЯ КОНТОРА СПБ., Невскій, 23. **1** Р.

БОЛЬШАЯ ЕЖЕДНЕВНАЯ БЕЗЦЕНЗУРНАЯ ГАЗЕТА

Самостоятельный и безусловно независимый органъ печати. Свободная отъ всякихъ мѣстныхъ вліяній, эта газета является **наиболѣе полнымъ.**

ВЫРАЗИТЕЛЕМЪ НУЖДЪ ПРОВИНЦІИ.

Главные отдѣлы газеты, а въ особенности: передовой, политической, столичной и провинціальной общественной жизни, фельетона, телеграммъ, корреспонденцій и пр.—по своей **полнотѣ и свѣжести** совершенно отвѣчаютъ подобнымъ же отдѣламъ другихъ **большихъ столичныхъ газетъ.** Въ ней принимаетъ участіе цѣлый рядъ **извѣстнѣйшихъ русскихъ писателей,** произведенія коихъ составляютъ главную притягательную силу ежемѣсячныхъ (толстыхъ) журналовъ.

Знамя газеты—стоятъ крѣпко за правду, законъ и достоинство Россіи, дѣйствуя примирительно во всѣхъ вопросахъ касающихся какъ отдѣльныхъ классовъ населенія, такъ и народностей входящихъ въ составъ Русской Имперіи.

ИЛЛЮСТРАЦІИ НА СОБЫТІЯ ДНЯ

какъ русской, такъ иностранной политической и общественной жизни будутъ помѣщаться не только въ литературной части воскресныхъ номеровъ, но и въ самой газетѣ по мѣрѣ надобности нѣсколько разъ въ недѣлю или же

ЕЖЕДНЕВНО,

ВЪ ИЛЛЮСТРИРОВАННЫХЪ ВОСКРЕСНЫХЪ НОМЕРАХЪ

состоящихъ каждый изъ 12—16 страницъ (изъ коихъ 8—12 печатаются въ формѣ еженедѣльныхъ иллюстрированныхъ журналовъ, на бѣлой глазированной бумагѣ) въ наступающемъ году, будутъ напечатаны, сверхъ большаго романа въ 3-хъ частяхъ

І. І. Ясинскаго (Максима Бѣлинскаго)

„ТАЙНА ЗАГОРСКОЙ УСАДЬБЫ“,

новѣйшія беллетристическія произведенія слѣдующ. извѣстныхъ русскихъ писателей: **Вас. Ив. Немировича-Данченко** большой романъ въ 3-хъ частяхъ

„ЖЕРТВА ПОКАЯННАЯ“

П. Д. Боборыкина

разсказъ **„ДВѢ КАѲЕДРЫ“.**

Кота Мурлыки (проф. Вагнера), повѣсть, „Доброе дѣло“, **И. Мерперъ,** „Искательница“, очеркъ изъ Петерб. правовъ **Л. А. Авиловой,** разсказъ „Злая воля“. **В. С. Мережковскаго** историческая повѣсть „Микель Анжело“. **Ѳедора Сологуба** разсказъ „Женя“. **П. А. Сергѣенко,** повѣсть „Встрѣча“.

ПОДПИСНАЯ ЦѢНА НА ВТОРОЕ ИЗДАНІЕ

„ВИРЖЕВЫХЪ ВѢДОМОСТЕЙ“

со всѣми приложеніями **и съ пересылкой въ Россіи:**

на годъ.	4 руб.	на 3 мѣсяца.	1 руб.
на полгода.	2 „	на 1 мѣсяцъ	35 коп.

Главная Контора: С.-Петербургъ, Невскій 28. 2—3

Дозв. ценз. Тифлисъ, 1 февраля 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2